ՀԱՅԵՐԵՆ

Խաղաղ գիշերով

Երաժշտություն՝ Լևոն Արևշատյան · Խոսք՝ Վահան Տերյան

Խաղաղ գիշերով դու կըգաս ինձ մոտ,
Քնքուշ ձեռներըդ ես կըհամբուրեմ ,
Կըցրեմ կյանքի հուշերը ցավոտ
Հեքիաթային լույսեր կվառեմ...

Երկար մազերդ կարձակես ազատ,
Հիվանդ գլուխս կըդնես կրծքիդ
Կըլինես քնքո՛ւշ, մոտի՛կ, հարազատ,
Անուշ խոսքերով կդյութես հոգիս...

Պայծառ աշխարհում կլինենք մենակ,
Ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված,
Կերազենք անհուշ, անվերջ ու անհագ,
Հեքիաթ աշխարհում առհավետ կապված..

Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել,
Ես ամենուրեք քեզ եմ որոնում.
Դո՛ւ, երազների լուսե օրրանում՝
Անո՛ւրջ, որ գուցե բնավ չես եղել...

Քեզ իմ կարոտի կսկիծն է վառել
Երազանքներում իմ նվիրական.
Իմ քույր, իմ դահիճ, իմ սուրբ սիրեկան,
Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել...

ENGLISH

In the Night of Peace

Music: Levon Arevshatyan · Words: Vahan Teryan

In the still of night you'll come to me.
I'll take your tender hands and kiss them both,
scatter the memories that ache in me
and kindle lights that only shine in tales.

You'll let your long hair tumble free
and draw my aching head against your breast.
So close, so gentle, dear as kin to me,
you'll charm my soul with every word you breathe.

Alone together in a world of light,
beguiled by the last gleam of a life of sorrow,
we'll dream past memory, never dream our fill,
bound to each other in a tale without an end.

I love you. You have not yet died.
Wherever I may go, I look for you.
You, in the cradle where my dreams burn bright,
a dream that may have never lived at all…

It was the ache of missing you that lit
your image in the dreams I hold most dear.
My sister, my executioner, my sacred love,
I love you. You have not yet died.

РУССКИЙ

In the Night of Peace

Музыка: Левон Аревшатян · Слова: Ваан Терьян

В тихую ночь ты придёшь ко мне,
я нежные руки твои расцелую,
развею всё то, что так больно мне вспомнить,
и сказочные огни зажгу.

Ты длинные волосы тихо распустишь,
прижмёшь мою больную голову к груди.
И будешь так нежна, близка, родная,
и душу зачаруешь ласкою речей.

Мы будем одни в озарённом мире,
обмануты меркнущим светом былых невзгод.
Мы будем грезить, всё забыв, не зная пресыщенья,
и сказка нас навеки сплетёт.

Я люблю тебя. Ты ещё не умерла.
Куда ни гляну — всюду я тебя ищу.
Ты, в светлой колыбели снов моих, —
мечта, которой, может быть, и не было на свете…

Моя тоска по тебе зажгла
твой образ в самых сокровенных грёзах.
Сестра моя, мой палач, моя святая любовь,
я люблю тебя. Ты ещё не умерла.